

# HPV (ՄԱՐԴԿԱՅԻՆ PAPILOMAVIRUS)-ի Պատվաստ

Gardasil®

## ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱՔ

Պատվաստի վերաբերյալ տեղեկության շատ հայտարարություններ տրամադրելի են իսպաներենով և այլ լեզուներով: Տես՝ [www.immunize.org/vis](http://www.immunize.org/vis):

### 1 ԻՆՉ Ե HPV-ն:

**Մարդկանց Սեռային papillomavirus-ը (HPV)** Միացյալ Նահանգներում սեռական ճանապարհով փոխանցվող ամենատարածված հիվանդությունն է: Սեռական ակտիվություն ունեցող տղամարդկանց և կանանց կեսից ավելին իրենց կյանքի ընթացքում ինչ-որ ժամանակ վարակվում են HPV-ով:

Ներկայումս մոտավորապես 20 միլիոն ամերիկացիներ վարակված են, և յուրաքանչյուր տարի վարակվածների թիվն ավելանում է մոտավորապես 6 միլիոնով: HPV-ն սովորաբար տարածվում է սեռական շփումից:

HPV-ով վարակումների մեծ մասը որբեւ Կիտանշան չի պատճառում, և ինքն իրեն անհետանում է: Սակայն, HPV-ն կարող է կանանց մոտ **արգանդի վզիկի քաղցկեղ** պատճառել: Արգանդի վզիկի քաղցկեղը կանանց մոտ երկրորդ մեծագույն քաղցկեղից մահվան պատճառն է ամբողջ աշխարհում: Միացյալ Նահանգներում տարեկան մոտավորապես 10,000 կին վարակվում է արգանդի վզիկի քաղցկեղով, որոնցից 4,000-ը ակնկալվում է, որ մահանան դրա պատճառով:

HPV-ն նաեւ առնչվում է մի քանի ավելի քիչ հայտնի քաղցկեղի տեսակների հետ, ինչպիսիք են հեշտոցի և բնոցի քաղցկեղը կանանց մոտ, և քաղցկեղի այլ տեսակների ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մոտ: Այն կարող է նաեւ պատճառել գորտնուկ սեռական օրգաններում, ինչպես նաեւ կոկորդում:

HPV վարակը բուժում չունի, բայց նրա պատճառած որոշ ինդիքներ հնարավոր է, որ բուժվեն:

### 2 HPV-ի պատվաստ - Ինչո՞ւ պատվաստվել:

HPV-ի պատվաստը կարելու է, քանի որ **այն կարող է մեծ մասամբ կանխարգելել արգանդի վզիկի քաղցկեղի դեպքերը** կանանց մոտ, եթե այն տրվել է Նախքան տվյալ անձի վիրուսով վարակվելը:

HPV-ի պատվաստով պաշտպանվելը սպասվում է, որ լինի երկարատև, սակայն այն չի փոխարինում արգանդի վզիկի քաղցկեղի քննությանը: Կանայք դեռեւս պետք է ունենան Քաբ քննություն՝ կանոնավորապես:

Ձեր ընդունած պատվաստը մեկն է այն **երկու պատվաստներից, որ կարող է տրվել HPV-ն կանխարգելելու համար**: Այն կարող է տրվել տղամարդկանց և կանանց: Արգանդի վզիկի քաղցկեղը կանխարգելելուց բացի, այն կարող է կանխարգելել նաեւ **հեշտոցի և բնոցի քաղցկեղը** կանանց մոտ, ինչպես նաեւ **սեռական գորտնուկները** Ե՛ւ տղամարդկանց, Ե՛ւ կանանց մոտ:

Մյուս պատվաստը տրվում է միայն կանանց, և միայն արգանդի վզիկի քաղցկեղը կանխարգելելու նպատակով:

### 3 Ո՞վ պետք է ստանա HPV պատվաստը և ինչո՞ւ:

**Կանայք՝ Սովորական պատվաստում**

- HPV պատվաստ ստանալ խորհուրդ է տրվում **11 կամ 12 տարեկան** աղջիկներին: Այն կարելի է տալ աղջիկներին 9 տարեկանից սկսյալ:

**Ինչո՞ւ է HPV պատվաստը այդ տարիքում տրվում աղջիկներին:**

Աղջիկների համար կարելու է, որ նրանք HPV պատվաստ ստանան **Նախքան** իրենց առաջին սեռական հարաբերությունը, որովհետեւ դրանով մարդկային papillomavirus-ով վարակվելու ենթակա չեն լինի:

Եթե աղջիկը կամ կինը արդեն վարակվել են վիրուսով, ապա պատվաստը այնքան լավ չի ներգործի, կամ չի ներգործի ընդհանրապես:

**Կանայք՝ Ուշացած պատվաստում**

- Պատվաստ ստանալ խորհուրդ է տրվում նաեւ **13-ից մինչեւ 26 տարեկան** աղջիկներին և կանանց, ովքեր պատվաստի բոլոր 3 չափաբաժինները չէին ընդունել ավելի փոքր տարիքում:

**Տղամարդիկ**

**9-ից 26 տարեկան տղամարդիկ** կարող են ստանալ HPV պատվաստում՝ սեռական գորտնուկները կանխարգելելու նպատակով: Ինչ վերաբերում է կանանց, ապա նրանց համար լավագույնը կլինի պատվաստվել նախքան առաջին սեռական հարաբերությունը:

**HPV պատվաստը տրվում է 3 չափաբաժիններով**

- |                |                              |
|----------------|------------------------------|
| 1-ին չափաբաժին | այժմ                         |
| 2-րդ չափաբաժին | 1-ին չափաբաժնից 1-2 ամիս անց |
| 3-րդ չափաբաժին | 1-ին չափաբաժնից 6 ամիս անց   |

Հավելյալ (խթանող) չափաբաժիններ խորհուրդ չի տրվում ստանալ:

HPV պատվաստ կարելի է ընդունել այլ պատվաստների հետ միաժամանակ:

### 4 Որոշ մարդիկ պետք չէ ստանան HPV պատվաստ կամ պետք է սպասեն

- Որեւ մեկը, որ երբեւ ունեցել է կյանքին վտանգ սպառնացող ալերգիա HPV պատվաստի որեւիցէ մի բաղադրիչից կամ HPV պատվաստի նախկին չափաբաժնից, պետք չէ պատվաստվի: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե պատվաստվող անձը որեւ սուր ալերգիա ունի, այդ թվում ալերգիա՝ թթխմորից:

- **Հոյ կանանց** խորհուրդ չի տրվում ստանալ HPV պատվաստ: Այնուամենայնիվ, հոյ ժամանակ HPV պատվաստ ընդունելը պատճառ չէ հղիությանը վերջ տալու տարբերակին: Կրճքով կերակրող կանայք կարող են պատվաստ ընդունել:

Որեւէ կնոջ, որ անդրադառնում է, թե հոյ ժամանակ է ստացել HPV պատվաստ, քաջալերվում է կապի մեջ մտնել արտադրողի **HPV-ն հղիության գրանցամատյանում՝ 800-986-8999** հեռախոսահամարով: Սա մեզ կօգնի հասկանալու, թե հոյ կանայք ինչպես են հակազդում պատվաստին:

- Անձինք, ովքեր թեթեւ հիվանդ են, երբ նրանց HPV-ի չափաբաժին է նախատեսվում, դեռեւս կարող են պատվաստվել: **Միջին կամ ծանր հիվանդությամբ** անձինք պետք է սպասեն մինչեւ լավանալը:

**5 Որո՞նք են այս պատվաստից սպասվող վտանգները:**

HPV-ի այս պատվաստը մի քանի տարի է գործածության մեջ է ամբողջ աշխարհում եւ շատ անվտանգ է եղել:

Այնուամենայնիվ, որեւէ դեղամիջոց կարող է լուրջ բարդություններ առաջացնել, ինչպես, օրինակ, սուր ալերգիկ ռեակցիա: Որեւէ պատվաստի լուրջ վնասվածք կամ մահ պատճառելու վտանգը չափազանց փոքր է:

Պատվաստից կյանքին վտանգ սպառնացող ալերգիկ ռեակցիաները շատ հազվադեպ են: Եթե պատահեն էլ, դրանք կլինեն պատվաստումից հետո մի քանի րոպեից մինչեւ մի քանի ժամվա ընթացքում:

Մեզ հայտնի է, որ **մեղմից մինչեւ միջին խնդիրներ** կարող են առաջանալ HPV պատվաստից: Սրանք երկար չեն տևում եւ իրենք իրենց անցնում են:

- Ռեակցիա թեւի վրա, որտեղ պատվաստ է կատարվել.
  - Ցավ (մոտավորապես 10-ից 8 անձի մոտ)
  - Կարմրություն կամ այտուց (մոտավորապես 4-ից 1 անձի մոտ)
- Ջերմություն.
  - Մեղմ (100°F) (մոտավորապես 10-ից 1 անձի մոտ)
  - Միջին (102°F) (մոտավորապես 65-ից 1 անձի մոտ)
- Ուրիշ խնդիրներ.
  - Գլխացավ (մոտավորապես 3-ից 1 անձի մոտ)
  - Նվաղում: Նվաղումի կարճատեւ նոպաներ եւ առընչակից ախտանշաններ (ինչպես ցնցումներ) կարող են պատահել որպես հետեւանք բժշկական որեւէ պրոցեդուրայի, ինչպես նաեւ՝ պատվաստման հետեւանքով: **Պատվաստումից հետո մոտավորապես 15 րոպե նստելը կամ պառկելը կարող է օգնել կանխարգելելու նվաղումը եւ ընկնելու հետեւանքով առաջացած վնասվածքները:** Տեղեկացրեք ձեր խնամողին, եթե հիվանդը գլխապտույտ կամ շշմածություն է զգում, տեսողության խանգարում ունի եւ կամ զնգոց՝ ականջներում:

Բոլոր պատվաստների նման, HPV պատվաստը կշարունակվի հսկողության տակ մնալ անբնական կամ սուր բարդությունների համար:

**6 Ի՞նչ՝ եթե սուր ռեակցիա լինի:**

**Ի՞նչ բանի պետք է ուշադրություն դարձնել:**

Լուրջ ալերգիկ ռեակցիաների, որոնցից են ցանը, նաեւ ոտքերի, ձեռքերի, դեմքի կամ շուրթերի այտուցումը, ինչպես նաեւ շնչառության դժվարությունը:

**Ես ի՞նչ պետք է անեմ:**

- Չանգեք բժշկին, կամ տվյալ անձին անմիջապես բժշկի տարեք:
- Ասեք բժշկին ինչ է պատահել, դեպքի օրը եւ ժամանակը եւ պատվաստումը երբ է կատարվել:
- Խնդրեք ձեր խնամատարին, որպեսզի ռեակցիայի մասին տեղեկագրի՝ լրացնելով Պատվաստի Հակազդեցության Դեպքերի Տեղեկագրման Համակարգի (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) ձև: Կամ դուք կարող եք տեղեկագիրը գրանցել VAERS կայքում [www.vaers.hhs.gov](http://www.vaers.hhs.gov) հասցեով կամ զանգել 1-800-822-7967 համարով:

VAERS-ը բժշկական խորհուրդներ չի մատակարարում:

**7 Պատվաստից վնասվածքի Հատուցման Ազգային Ծրագիր**

Պատվաստից վնասվածքի Հատուցման Ազգային Ծրագիրը (Vaccine Injury Compensation Program, VICP) ստեղծվել է 1986 թվականին:

Անձինք, ովքեր կարծում են, թե հնարավոր է վնասված լինեն պատվաստից, կարող են հայց ներկայացնել VICP-ին՝ զանգահարելով 1-800-338-2382 հեռախոսահամարով կամ այցելելով նրանց կայքէջը՝ [www.hrsa.gov/vaccinecompensation](http://www.hrsa.gov/vaccinecompensation):

**8 Ինչպե՞ս կարող եմ ավելի տեղեկություն ունենալ:**

- Հարցրեք ձեր խնամատարին: Նրանք կարող են ձեզ տալ պատվաստի փաթեթի ներդիրը կամ առաջարկել տեղեկության այլ աղբյուրներ:
- Չանգեք ձեր տեղական կամ նահանգային բաժանմունք:
- Կապվեք Հիվանդությունների Կառավարման եւ Կանխարգելման Կենտրոնների հետ (Centers for Disease Control and Prevention, CDC).
  - Չանգեք **1-800-232-4636 (1-800-CDC-INFO)** կամ
  - Այցելեք CDC-ի կայքը՝ [www.cdc.gov/std/hpv](http://www.cdc.gov/std/hpv) եւ [www.cdc.gov/vaccines](http://www.cdc.gov/vaccines)

